Կարգապահական գործ թիվ ԿԳ-24154

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՅԿԱԶԻ ՍԵԴՐԱԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Հայկուհի Հայկազի Սեդրակյանի,

փաստաբանի ներկայացուցիչներ՝ փաստաբաններ՝ Սեդա Սողոմոնյանի, Լենա Միտիչյանի,

քննության առնելով փաստաբան Հայկուհի Հայկազի Սեդրակյանին (արտոնագիր՝ թիվ 2213), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Արմենուհի Կոստանյանը **(այսուհետև նաև՝ Դիմող)**, դիմելով ՀՀ փաստաբանների պալատ **(այսուհետև նաև՝ Պալատ)**, հայտնել է, որ 21.02.2024թ. «ԲԱՍ ԼՈՈՒ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի **(այսուհետև նաև՝ Ընկերություն)** հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր **(այսուհետև նաև՝ Պայմանագիր)**: Այնուհետև, լիազորագրի հիման վրա Դիմողի շահերի պաշտպանությունը ստանձնել է ընկերության փաստաբան Հայկուհի Սեդրակյանը **(այսուհետև նաև՝ Փաստաբան)** :

Դիմողը հայտնել է, որ սկսած 18.04.2024թ. ո՛չ Փաստաբանը և ո՛չ էլ ընկերությունը չեն պատասխանել իր հեռախոսազանգերին և հաղորդագրություններին՝ կիսատ թողնելով Պայմանագրի 1.2-րդ կետով սահմանված բանակցության գործընթացը և խախտելով ստանձնած պարտավորությունների կատարումը:

Դիմողի պնդմամբ, Փաստաբանի պատճառով խաթարվել և անավարտ են մնացել

թիվ ԿԳ-24154-2-Ա
30.10.2024թ.

քաղաքացիական գործով բանակցությունները, որոնք վերաբերում էին երեխայի տեսակցության կարգին: Դիմողը նշել է, որ այլևս չի վստահում ո՛չ Փաստաբանին, ո՛չ էլ ընկերությանը:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 02.08.2024 թվականին Դիմողին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39.5 հոդվածի 5-րդ մասին համապատասխան, գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Դիմողը 16.08.2024 թվականի բացատրությամբ նշել է, որ Պայմանագրով մատուցման ենթակա ծառայություններն ամբողջ ծավալով չեն մատուցվել, նշել է նաև այն, որ փորձել է կապ հաստատել Փաստաբանի հետ, սակայն վերջինս թողել է իր զանգերն ու հաղորդագրություններն անպատասխան, ինչի կապակցությամբ նաև ներկայացրել է Փաստաբանի հետ ունեցած հաղորդագրությունների պատճենը և առերևույթ բջջային օպերատորի անունից հանդես եկող անձի հետ ունեցած հաղորդագրության պատճենը:

Դիմողը մասնակցել է 2024 թվականի հոկտեմբերի 9-ին և 30-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստերին, որոնց ժամանակ, ըստ էության, պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը: Նշված նիստերի ժամանակ Դիմողը նաև նշել է, որ թեև սույն կարգապահական գործի հարուցման համար հիմք հանդիսացած դիմումը ստորագրվել է իր կողմից, սակայն այդ դիմումը թռուցիկ է կարդացել և չի նկատել, որ դիմում նշված այն փաստը, որ սկսած 2024 թվականի ապրիլի 18-ից Ընկերությունը (Պայմանագրում նշված հեռախոսահամար՝ +37477287675) չի պատասխանում Դիմողի զանգերին և հաղորդագրություններին չի համապատասխանում իրականությանը, քանի որ Դիմողը միշտ կապի մեջ է եղել Փաստաբանի հետ, իսկ Ընկերության հետ երբեք կապ չի պահել, Ընկերություն չի զանգահարել և իրեն հուզող հարցերը չի քննարկել Ընկերության տնօրենի հետ:

2. <u>Փաստաբանի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Հայկուհի Սեդրակյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն Արմենուհի Կոստանյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 26.06.2024թ. ներկայացրած բացատրությամբ հայտնել է, որ 21.02.2024թ. Դիմողի և Ընկերության միջև կնքվել է Պայմանագիրը: Համաձայն Պայմանագրի՝ ընկերությունը պարտավորվել է իրականացնել թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործով հայցվոր կողմի հետ բանակցությունների վարում, նշված քաղաքացիական գործի շրջանակներում հաշտության համաձայնության նախագծի պատրաստում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի **(այսուհետև նաև՝ Դատարան)** հաստատմանը ներկայացնելու համար, ինչպես նաև Դիմողի պահանջով թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում պատվիրատուի իրավունքների և շահերի ներկայացում և պաշտպանություն Դատարանում՝ կապված բացառապես հաշտության համաձայնության քննարկման և հաստատման հետ:

Փաստաբանը հայտնել է, որ նշված գործի շրջանակներում կազմել է հաշտության համաձայնության նախագծեր, բազմիցս իրականացրել է հակառակ կողմի հետ բանակցություններ՝ հաշտության համաձայնության նախագծի փոփոխությունների վերաբերյալ:

Փաստաբանի պնդմամբ, 16.04.2024թ. ներկայացրած վերջին նախագիծը հակառակորդ կողմի համար ընդունելի չէր, ուստի՝ մինչ բացատրությունը ներկայացնելու օրը հակառակորդ կողմից նախագծի վերջնական տարբերակ չի ուղարկվել: Հայցվորի արձագանքի բացակայության մասին Դիմողը տեղեկացվել է զանգահարելով Փաստաբանին:

Փաստաբանը հայտնել է, որ պատշաճ իրականացրել է Պայմանագրով նախատեսված բոլոր անհրաժեշտ գործողությունները կապված բանակցությունների վարման և նախագծերի պատրաստման հետ, գրեթե ամենօրյա ռեժիմով կապի մեջ է գտնվել Դիմողի հետ՝ թե՛ «Տելեգրամ» հավելվածի, թե՛ էլեկտրոնային փոստի և թե՛ հեռախոսազանգերի միջոցով:

Միաժամանակ, սույն կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով 02.08.2024 թվականին Փաստաբանին առաջարկվել է Օրենքի 39.5-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Փաստաբանը 27.08.2024 թվականի բացատրությամբ, ըստ էության, պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ բանակցությունների վարումը ավարտվել է 05.04.2024 թվականին կայացած հանդիպմանը, որին մասնակցել է նաև Դիմողը, հաշտության համաձայնության նախագծի վերջնական տարբերակը պատրաստվել և ներկայացվել է Դիմողին և գործով հակառակորդ կողմին, ումից պատասխան չի ստացվել:

Փաստաբանն, անդրադառնալով դատարանում հաշտության համաձայնության քննարկման և հաստատման մասով ծառայության մատուցմանը, նշել է, որ սպառված չէր հաշտության համաձայնությունը հաստատելու համար դատարանում ներկայացուցչություն իրականացնելու հնարավորությունը, քանի որ թեև քիչ հավանական էր, որ հակառակորդ կողմը կընդուներ հաշտության համաձայնության Դիմողի պայմանները և կստորագրեր Դիմողի պայմաններով հաշտության համաձայնությունը, սակայն քանի որ գործը վերաբերել է երեխայի տեսակցության կարգ սահմանելուն և ամբողջությամբ բացառված չի եղել, որ կողմերի միջև լարվածությունը կթուլանար և հակառակորդ կողմի դիրքորոշումը կփոփոխվեր, ինչի արդյունքում կստորագրվեր հաշտության համաձայնությունը:

09.10.2024թ. տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ժամանակ Դիմողը 30.05.2024 թվականին Դատարանին գրավոր հայտնել է, որ հետ է կանչում Փաստաբանի լիազորությունները, սակայն դրա մասին չի տեղեկացրել Փաստաբանին և Ընկերությանը և չի լուծել Պայմանգիրը, ինչից հետո 22.08.2024 թվականին ուղարկվել է էլեկտրոնային ծանուցում Պայմանագիրը լուծելու մասին:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 28.06.2024թ. թիվ 271-Ա/ԿԳ-24154 որոշմամբ փաստաբան Հայկուհի Սեդրակյանի նկատմամբ **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք) 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.6.1-ին ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

04.07.2024թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Հայկ Ծատուրյանին (**այսուհետև՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 04.09.2024թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ Աշխատակիցը հաստատված է համարել միայն սույն որոշման 5-րդ բաժնում նշված № 1-4 և 6 կետերում նշված փաստերը:

Աշխատակիցը հաստատված չի համարել հետևյալ փաստերը.

1) Փաստաբանի կողմից հաշտության համաձայնության նախագիծը 16.04.2024թ. գործով հակառակորդ կողմին ուղարկելուց հետո դրա հետագա քննարկումը ապահովված լինելու և վերջնական տարբերակը թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործով կողմերի միջև ստորագրված լինելու, ինչպես նաև հաշտության համաձայնությունը քննարկված լինելու՝ այդ թվում 16.04.2024թ. հետո որևէ նիստ անցկացված լինելու վերաբերյալ: *Դիմողի և Փաստաբանի բացատրություններից, ինչպես նաև դրանց կից ներկայացված նյութերից պարզ չէ, թե ինչ գործողություններ են իրականացվել Փաստաբանի կողմից 16.04.2024 թվականից հետո՝ մասնավորապես, հաստատվել է արդյո՞ք հաշտության համաձայնության նախագիծը, ի՞նչ գործողություններ է ձեռնարկել Փաստաբանը գործով հակառակորդ կողմից տեղեկություններ չունենալու պայմաններում:*

2) 18.04.2024 թվականից հետո ընդհուպ մինչև 22.08.2024 թվականին Պայմանագիրը լուծելու մասին ծանուցումն ուղարկելու օրը Փաստաբանի և Դիմողի միջև հաղորդակցվելու վերաբերյալ: *Դիմողի և Փաստաբանի բացատրություններից, դրանց կից ներկայացված նյութերից պարզ չէ, թե նշված ժամանակահատվածում տեղեկացրել է արդյո՞ք Փաստաբանը հանձնարարության կատարման ընթացքի վերաբերյալ Դիմողին:*

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 04.09.2024թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 09.10.2024թ., ժամը՝ 18:30-ին, 30.10.2024թ., ժամը՝ 19:30-ին Պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

Հանձնաժողովի հաջորդ նիստը տեղի է ունեցել 30.10.2024թ., ժամը՝ 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք. Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) Ընկերությունը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը, իսկ լիազորագրի հիման վրա Դիմողի անունից հանդես է եկել Ընկերության աշխատակից հանդիսացող Փաստաբանը: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Պայմանագրով:*

2) Պայմանագրի առարկան կազմել են հետևյալ ծառայությունները՝ թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործով հայցվոր կողմ՝ Սարգիս Գևորգյանի հետ բանակցությունների վարում, նշված քաղաքացիական գործի շրջանակներում հաշտության համաձայնության նախագծի պատրաստում Դատարանի հաստատմանը ներկայացնելու համար, ինչպես նաև Դիմողի պահանջով թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործով Դիմողի իրավունքների և շահերի ներկայացուցչություն և պաշտպանություն Դատարանում՝ կապված բացառապես հաշտության համաձայնության քննարկման և հաստատման հետ:

Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրություններով, ինչպես նաև Պայմանագրի 1.2 կետով:

3) Փաստաբանն իրեն տրված հանձնարարության կատարման ապահովման ուղղությամբ կազմել, փոփոխել, ինչպես նաև ներկայացրել է հաշտության համաձայնության նախագիծը: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությամբ, դրան կից ներկայացված Փաստաբանի էլեկտրոնային փոստի հասցեից Դիմողին և գործով հակառակորդ կողմին հաշտության համաձայնության նախագիծը ուղարկելու մասին 24.02.2024թ., 27.02.2024թ., 04.03.2024թ., 08.03.2024թ., 12.03.2024թ. 19.03.2024թ., 11.04.2024թ., 15.04.2024թ. և 16.04.2024թ. քաղվածքները, ինչպես նաև հաշտության համաձայնության նախագիծը նշումներով:*

4) Դիմողը գործով տեղեկություններ ստանալու նպատակով 16.04.2024թ. ժամը՝ 20:37-ին, (08:37 PM) և 03.05.2024 20:55-ին (08:55 PM) թվականին Փաստաբանին ուղարկել է հաղորդագրություններ, ինչպես նաև զանգահարել է վերջինիս 18.04.2024թ. և 22.04.2024թ., ինչի կապակցությամբ առկա են Փաստաբանի հաղորդագրությունները ավելի ուշ զանգահարելու մասին նշումով:

Իր հերթին, Փաստաբանը 16.04.2024թ. ժամը՝ 16:21-ին, Դիմողին ուղարկել է հաղորդագրություն, ինչպես նաև զանգահարել է վերջինիս 16.04.2024թ. ժամը՝ 17:02–ին (տևողությունը՝ 3:49) և 18.04.2024 թվականին ժամը 15:37-ին (տևողությունը՝ մոտ 13 րոպե):

Նշված փաստերը հաստատվում են Դիմողի և Փաստաբանի բացատրություններին կից ներկայացված վերջիններիս միջև հաղորդագրությունների և հեռախոսազանգերի քաղվածքներից, ինչպես նաև Հանձնաժողովի 9.10.2024թ. նիստի ժամանակ Դիմողի կողմից հրապարակած իր հեռախոսազանգերի պատմությունից:

5) Դիմողի նեկայացուցիչ Հասմիկ Մելիքսեթյանը 15.07.2024 թվականին հակընդդեմ հայց է ներկայացրել Դատարան ընդդեմ Սարգիս Սուրենի Գևորգյանի՝ ալիմենտի բռնագանձման պահանջի մասին: *Նշված փաստերը հաստատվում են թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործի «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվությամբ:*

6) Ընկերությունը 22.08.2024 թվականին էլեկտրոնային տարբերակով, իսկ 23.08.2024 թվականին փոստով ուղարկել է Դիմողին ծանուցում Պայմանագիրը լուծելու մասին: *Նշված փաստը հաստատվում է Փաստաբանի բացատրությանը կից ներկայացված Փաստաբանի էլեկտրոնային փոստի հասցեից քաղվածքով:*

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված չի համարում հետևյալ փաստերը.

7) Դիմողը 2024 թվականի ապրիլի 22-ից մինչև 2024 թվականի ապրիլի 15-ն ընկած ժամանակահատվածում զանգահարել է Փաստաբանին, սակայն հեռախոսազանգը թողնվել է անպատասխան: *Դիմողը չի ներկայացրել որևէ ապացուց նշված ժամանակահատվածում Փաստաբանին հեռախոսազանգ կատարած լինելու վերաբերյալ:*

8) Դիմողը զանգահարել է Ընկերությանը (Պայմանագրում նշված հեռախոսահամար՝ +37477287675) և կապի մեջ է գտնվել Ընկերության հետ, այդ թվում այցելել է գրասենյակ պարզելու, թե որն է իր Փաստաբանի կողմից իր զանգերին չպատասխանելու պատճառը: *Նշված փաստը հաստատվում է Հանձնաժողովի 30.10.2024թ. նիստի ժամանակ Դիմողի կողմից տրված բացատրությամբ:*

9) Սկսած 2024 թվականի ապրիլի 18-ից Ընկերությունը (Պայմանագրում նշված հեռախոսահամար՝ +37477287675) չի պատասխանում Դիմողի զանգերին և հաղորդագրություններին: *Նշված փաստը հաստատվում է Հանձնաժողովի 30.10.2024թ. նիստի ժամանակ Դիմողի կողմից տրված բացատրությամբ:*

10) Ընկերությունը և Փաստաբանը անավարտ են թողել և խաթարել են Պայմանագրի առարկայում նշված բանակցության գործընթացը:

6. <u>Փաստաբանի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Հայկուհի Սեդրակյանը փաստաբան է հանդիսանում 06.02.2017 թվականից և 2019-2024թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Հայկուհի Սեդրակյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և Կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.5-րդ և 3.6.1-ին ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Փաստաբանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի շրջանակներում ըստ էության Փաստաբանին վերագրվում է առերևույթ բարեխիղճ իրավական օգնություն ցույց չտալու, հանձնարարության կատարման ընթացքի մասին չտեղեկացնելու

վարքագիծը: Հանձնաժողովը հարկ է համարում առանձին-առանձին անդրադառնալ Փաստաբանին վերագրվող առերևույթ կարգապահական խախտումներից յուրաքանչյուրին:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի և Կանոնագրքի 2.7.2-րդ, 3.5.5-րդ ենթակետերի առերևույթ խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Օրենքի 39.1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի մասնակցությամբ գործով ի վնաս փաստաբանի վստահորդի* ***ընդունված ակտն ինքնին չի առաջացնում փաստաբանի կարգապահական պատասխանատվություն:***

Օրենքի 39.3-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է, եթե՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն **առերևույթ բացակայում են**:

Օրենքի 11.1-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ նախադասության համաձայն՝ *փաստաբանների պալատի կարգապահական* ***հանձնաժողովը փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործն ըստ էության քննող և որոշում կայացնող մարմինն է:***

Վերը նշված Օրենքի իրավական նորմերի, ինչպես նաև Կանոնագրքի ու Պայմանագրի դրույթների համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ փաստաբանը պարտավոր է իր վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել բարեխղճորեն, մասնավորապես՝ իրականացնել բոլոր անհրաժեշտ

գործողություններն իր վստահորդի հանձնարարությունը պատշաճ կատարելու համար: Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը հարուցվում է իր արարքում առերևույթ օրենքի կամ Կանոնագրքի խախտման փաստերի առկայության դեպքում, ինչը չի բացառվում հետագայում Հանձնաժողովի կողմից Փաստաբանի նկատմամբ հարուցված վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը, եթե վարույթը հարուցվելուց հետո Հանձնաժողովի որոշումը կայացնելու պահի դրությամբ Դիմողը չի ներկայացնում բավարար ապացույցներ Փաստաբանի կողմից կարգապահական խախտում թույլ տալը հավաստող ապացույցներ:

Միաժամանակ Փաստաբանը չի կարող պատասխանատվության ենթարկվել, եթե չի կարողացել հասնել ակնկալվելիք արդյունքի, իսկ ի վնաս վստահորդի ընդունված ակտն ինքնին չի կարող փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հիմք հանդիսանալ:

Սույն գործով Դիմողի և «ԲԱՍ ԼՈՈՒ ԳՐՈՒՊ» պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ *ծառայություններն իրենցից ներկայացնում են ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործով Հայցվոր կողմի հետ բանակցությունների վարում, նշված քաղաքացիական գործի շրջանակներում Երևան քաղաք առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հաստատմանը ներկայացնելու համար հաշտության համաձայնության նախագծի պատրաստում, ինչպես նաև, ըստ Պատվիրատուի պահանջի, թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում Պատվիրատուի իրավունքների և շահերի ներկայացում և պաշտպանություն Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում կապված բացառապես հաշտության համաձայնության քննարկման և հաստատման հետ:*

Պայմանագրի 3.4-րդ կետի համաձայն՝ *Խորհրդատուն չի երաշխավորում Ծառայությունները մատուցելու նպատակին հասնելը* ***և պատասխանատվություն չի կրում, եթե Պատվիրատուն չի ստացել ծառայությունների մատուցման նպատակը:***

Տվյալ դեպքում Դիմողն իր դիմում նշել է, որ Պայմանագրի 1.2-րդ կետում սահմանված բանակցությունների գործընթացը Փաստաբանի և Ընկերության կողմից թողնվել է անավարտ և կիսատ վիճակում: Մինչդեռ Հանձնաժողովի նիստերի ժամանակ պարզվել է, որ Փաստաբանը կատարել է բոլոր անհրաժեշտ գործողությունները: Մասնավորապես,

21.02.2024թ. Դիմողի և Ընկերության միջև կնքված Պայմանագրի 1.2-րդ կետի համաձայն՝ ծառայություններն իրենցից ներկայացրել են.

- թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործով հայցվոր կողմի հետ բանակցությունների վարում,
- նշված քաղաքացիական գործի շրջանակներում Դատարանի հաստատմանը ներկայացնելու համար հաշտության համաձայնության նախագծի պատրաստում, ինչպես նաև,
- ըստ Պատվիրատուի պահանջի, թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում Պատվիրատուի իրավունքների և շահերի ներկայացում և պաշտպանություն Դատարանում կազմված բացառապես հաշտության համաձայնության քննարկման ն հաստատման հետ:

Պայմանագրի շրջանակներում որևէ այլ ծառայություն մատուցելու պարտականությունը Փաստաբանը չի ունեցել:

Պայմանագիրը կնքելու հենց նույն օրը Փաստաբանը կապ է հաստատել թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործով Դիմողի հակառակորդ կողմի ներկայացուցիչ Սերգեյ Ադիբեկյանի հետ և առաջարկել է քննարկել գործը հաշտությամբ լուծելու տարբերակներ: Փաստաբան Սերգեյ Ադիբեկյանն առաջարկել է հաշտության համաձայնության տարբերակն ուղարկել իր էլեկտրոնային փոստին: Փաստաբանը, կազմելով հաշտության համաձայնության նախագիծը, այն ուղարկել է Դիմողին և իր հետ համաձայնեցնելուց հետո 2024 թվականի փետրվարի 27-ին ուղարկել է փաստաբան Սերգեյ Ադիբեկյանին: Վերջինս նախագիծը ստանալուց հետո ուղարկել է հաշտության համաձայնության իր տարբերակը:

Փաստաբան Սերգեյ Ադիբեկյանի կողմից կազմված հաշտության համաձայնության նախագծի պայմանները Փաստաբանը պարզաբանել է Դիմողին, իսկ նախագծում կատարվելիք դիտարկումները և առաջարկվելիք փոփոխությունները Փաստաբանը քննարկել է Դիմողի հետ, ինչի արդյունքում նախագիծը լրամշակվել և ուղարկվել է Դիմողին, այնուհետև նախագծում դարձյալ փոփոխություններ են կատարվել, որից հետո 2024 թվականի մարտի 19-ին այն ուղարկվել է փաստաբան Սերգեյ Ադիբեկյանին:

26.03.2024թ. և 02.04.2024թ. Փաստաբանի և Սերգեյ Ադիբեկյանի հեռախոսային քննարկումների արդյունքում որոշվել է կազմակերպել հանդիպում կողմերի և նրանց փաստաբանների մասնակցությամբ, քննարկել և վերջնական ամփոփել հաշտության համաձայնության պայմանները:

05.04.2024թ. Սերգեյ Ադիբեկյանի, Սարգիս Գևորգյանի, Դիմողի և Փաստաբանի մասնակցությամբ տեղի է ունեցել հանդիպում հաշտության համաձայնության պայմանների վերջնական քննարկման համար: Նշված հանդիպումը տևել է 2 ժամից ավելի, կողմերի միջև առկա է եղել որոշակի միջանձնային լարվածություն, **սակայն հանդիպման ընթացքում մի շարք հարցերի վերաբերյալ հաջողվել է ձեռք բերել փոխհամաձայնություն, քանի որ Հայցվոր կողմը համաձայնել է Դիմողի պայմաններին,** սակայն առկա են եղել հարցեր, որոնց շուրջ կողմերը չեն գտել ընդհանուր եզրեր:

Նույն հանդիպման վերջում, Դիմողի ներկայությամբ Սարգիս Գևորգյանը հայտնել է, որ զիջումների է գնացել մի շարք հարցերի շուրջ, սակայն եթե Դիմողը համաձայնություն չտա իր կողմից առաջարկվող պայմաններից երկուսին, որոնք իր համար էական կարևորություն ունեն, ապա հաշտության համաձայնություն չի կնքվելու և Հայցվոր կողմը շարունակելու է դատական գործընթացը:

Հանդիպման արդյունքում փաստաբանները կողմերին առաջարկել են ևս մեկ անգամ մտածել չհամաձայնեցված պայմանների շուրջ և Սերգեյ Ադիբեկյանի առաջարկով պայմանավորվածություն է ձեռք բերվել առաջիկա 10 օրվա ընթացքում միմյանց ուղարկել Կողմերից յուրաքանչյուրի համար ընդունելի վերջնական պայմանները:

Սերգեյ Ադիբեկյանը նույն հանդիպման ավարտին Դիմողի ներկայությամբ հայտնել է նաև, որ եթե Դիմողի պայմաններն իր վստահորդի համար ընդունելի լինեն, ապա այդ մասին կտեղեկացնեն նույն նամակագրությամբ, իսկ եթե ոչ, ապա Հայցվոր կողմը կշարունակի պատրաստվել գործի ըստ էության քննությանը:

Դիմողի հետ քննարկումների արդյունքում որոշված պայմաններով համաձայնության նախագիծն ուղարկվել է վերջինիս 11.04.2024թ.: Արմենուհի Կոստանյանը նույն օրը sms

(էս էմ էս) հաղորդագրություններով խնդրել է փոփոխություններ կատարել համաձայնության նախագծում, որի արդյունքում արդեն իսկ փոխհամաձայնեցված պայմանները ևս փոփոխությունների են ենթարկվել և փոփոխված տարբերակն ուղարկվել է վերջինիս՝ 15.04.2024թ.:

16.04.2024թ. համաձայնության նախագծի վերջնական տարբերակն ուղարկվել է, Սերգեյ Ադիբեկյանին: *Քանի որ Արմենուհի Կոստանյանի համար 16.04.2024թ., նախագծից տարբերվող այլ պայմաններով հաշտության համաձայնությունն ընդունելի չէր, ուղեկցող նամակում հստակ նշվել է նաև, որ այլ պայմանների ներառում հաշտության համաձայնության մեջ Պատասխանողի համար ընդունելի չէ:*

Բացատրությամբ, ինչպես նաև 09.10.2024թ. Հանձնաժողովի նիստի ժամանակ Փաստաբանը հայտնել է, որ հաշտության համաձայնության վերջնական տարբերակի վերաբերյալ Հայցվորի ներկայացուցչի կողմից որևէ պատասխան չի ստացվել, ոչ պայմանավորված 10-օրյա ժամկետում, ոչ էլ դրանից հետո Դիմողի համար ընդունելի վերջնական տարբերակ չի ուղարկվել:

Քանզի թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործի շրջանակներում այդ գործով հայցվորի և Դիմողի միջև որևէ հաշտության համաձայնություն այդպես էլ չի կնքվել, հետևաբար բացառապես հաշտության համաձայնության քննարկման և հաստատման կապակցությամբ դատական նիստի մասնակցության պարտավորությունը տվյալ պահին առարկայազուրկ է դարձել և չէր կարող կատարվել Փաստաբանի կողմից: Միաժամանակ Դիմողի և Ընկերության միջև կնքված Պայմանագիրն ընդհուպ մինչև 2024 թվականի օգոստոսի 22-ը չի համարվել կատարմամբ դադարած, քանի որ թիվ ԵԴ2/0152/02/24 քաղաքացիական գործը շարունակվել է:

Ընկերությունը տեղեկություն է ստացել այն մասին, որ դեռևս 2024 թվականի մայիսի 30-ին Դիմողը Դատարանում հայտարարել է Փաստաբանի լիազորությունները դադարեցնելու մասին, ուստի՝ Ընկերությունը 2024 թվականի օգոստոսի 22-ին լուծել է Պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը բարեխիղճ իրավաբանական օգնություն է ցույց տվել Դիմողին, իսկ այն փաստը, որ չի հաջողվել հաշտության համաձայնությունը կնքել հայցվորի հետ ինքնին չի վկայում Փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի խախտում թույլ տված լինելու մասին:

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի և Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետի առերևույթ խախտման մասով.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.*

Կանոնագրքի 3.6.1-ին ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է* ***կանոնավորապես տեղեկացնել*** *վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և* ***պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:***

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա* ***մեղքն ապացուցված չէ նույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական***

պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: *Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված* ***կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:***

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 447-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է ելնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *եթե նույն հոդվածի 1-ին կետում պարունակվող կանոնները հնարավորություն չեն տալիս որոշել պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզվի կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում, նկատի են առնվում բոլոր համապատասխան հանգամանքները՝ ներառյալ պայմանագրին նախորդող բանակցությունները և թղթակցությունը,* ***կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը****, գործարար շրջանառության սովորույթները, կողմերի հետագա վարքը:*

Պայմանագրի 3.2-րդ կետի համաձայն՝ ***Պատվիրատուն*** *երաշխավորում է, որ* ***Խորհրդատուին տրամադրել է*** *Պատվիրատուին հասանելի և ծառայությունների մատուցման համար* ***անհրաժեշտ ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն****, ինչպես նաև բոլոր առկա և հասանելի փաստաթղթերը: Պատվիրատուն երաշխավորում է տեղեկացնել Խորհրդատուին ցանկացած փոփոխության մասին, որը կարող է ազդեցություն ունենալ տրամադրված տեղեկատվության (և) կամ փաստաթղթերի ամբողջականության (և) կամ ճշտության վրա:*

Վերը նշված Օրենքի իրավական նորմերի, ինչպես նաև Կանոնագրքի ու Պայմանագրի դրույթների համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ փաստաբանը պարտավոր է պահպանել Կանոնագրքի պահանջներն, այդ թվում՝ նաև հանձնարարության կատարման ընթացքի մասին պատշաճ տեղեկացնել իր վստահորդին և պատասխանել վստահորդի հարցերին: Ընդ որում կարգապահական խախտում թույլ տալու հարցում փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ փաստաբանի մեղքն ապացուցված չէ Օրենքով սահմանված կարգով: Այսինքն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար էական և անհրաժեշտ պայման է փաստաբանի մեղքի առկայության ապացուցված լինելու հանգամանքը: Ընդ որում մեղքի առկայությունը փաստաբանի կողմից կարգապահական խախտումը թույլ տված լինելու հարցում պետք է ապացուցված լինի այն աստիճանի, որ որևէ կասկածի տեղիք չտա: Եթե առկա է որևէ կասկած փաստաբանի մեղքի առկայության հարցում, ապա այդ կասկածը պետք է մեկնաբանվի փաստաբանի օգտին:

Միաժամանակ, երբ պայմանագրում սահմանված պայմանների բառացի և տառացի նշանակությունը հնարավորություն չի տալիս որոշելու պայմանագրի բովանդակությունը, ապա պետք է պարզել կողմերի իրական ընդհանուր կամքը՝ հաշվի առնելով պայմանագրի նպատակը: Ընդ որում ի թիվս այլնի նկատի է առնվում նաև **կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված գործելակերպը:**

Տվյալ դեպքում Դիմողը դժգոհում է Փաստաբանից, քանի որ ըստ Դիմողի կողմից ներկայացված հեռախոսային զանգերի սկրինշոթի (Screenshot)՝ Դիմողը 2024 թվականի ապրիլի 16-ին հաղորդագրություն է գրել Փաստաբանին հետևյալ բովանդակությամբ. **«Հայկուհի ջան խոսեցի՞ք»**: Ի պատասխան որի Փաստաբանը 2024 թվականի ապրիլի 18-ին ուղարկել է **«Ես հետ կզանգահարեմ»** կարճ հաղորդագրությունը: Փաստաբանը 2024 թվականի ապրիլի 22-ին ևս Դիմողին ուղարկել է «**Ես հետ կզանգահարեմ**» կարճ հաղորդագրությունը: Այնուհետև Դիմողը 2024 թվականի մայիսի 3-ին Փաստաբանին ուղարկել է հետևյալ բովանդակությամբ sms (էս էմ էս) հաղորդագրությունը.

«Հայկուհի ջան ողջույն, հարցեր ունեմ, ինձ պետք է իմանալ, եթե Ձեր ծանրաբեռնվածությունը թույլ չի տալիս շարունակել, կողմնորոշվեմ ինչ անել»:

2024 թվականի հոկտեմբերի 9-ին տեղի ունեցած Հանձնաժողովի նիստի ժամանակ Փաստաբանը նշել է, որ 2024 թվականի փետրվարի 3-ի հաղորդագրությունը չի ստացել, իսկ 2024 թվականի հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած նիստի ժամանակ 2024 թվականի ապրիլի 22-ին ուղարկված **«Ես հետ կզանգահարեմ»** կարճ հաղորդագրությունը ուղարկելուց հետո Դիմողին զանգահարած լինելու մասով նշել է, որ երևի զանգ եղել է, եթե գրել է **«Ես հետ կզանգահարեմ»,** չի հիշում, սակայն Փաստաբանը նաև նշել է, որ միշտ այդ **«Ես հետ կզանգահարեմ»** կարճ հաղորդագրություններից հետո ինքը և Դիմողն անպայման խոսել են:

Այնուհետև Փաստաբանը նշել է, որ ինքը և Դիմողը բացի հեռախոսային sms (էս էմ էս) նամակագրությունից, կապի մեջ են եղել նաև էլեկտրոնային փոստով նամակագրության, Telegram (Տելեգրամ) և WhatsApp (Վոթսափ) հավելվածներում կատարված նամակագրության միջոցով և եթե առկա է եղել կապի խնդիր ու Դիմողը տեսել է, որ օրինակ հեռախոսազանգը անպատասխան է մնացել, ապա ինչն է Դիմողին խանգարել, որ իր հարցերն ուղղեր Փաստաբանին կապի այլ եղանակներով:

Փաստաբանը հավելել է, որ իր և Դիմողի նամակագրության մեջ եղել է դեպք, երբ որ ինքը Դիմողին գրել է որևէ բջջային հավելվածով, իսկ հետո նկատել, որ Դիմողը չի արձագանքում, մեկ այլ բջջային հավելվածով է նամակ գրել, ու այդ նամակում նաև նշել է, որ քանզի գրել է այլ հավելվածով, բայց Դիմողը չի պատասխանել, ստիպված նույնը գրում է այժմ մեկ այլ հավելվածով:

Հանձնաժողովի 2024 թվականի հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած նիստի ժամանակ Փաստաբանի ներկայացուցիչ, փաստաբան Լենա Միտիչյանը հրապարակել է մի հաղորդագրություն, որի համաձայն՝ Փաստաբանը Դիմողին գրել է, որ ձայնային հաղորդագրություն է ուղարկել, սակայն նոր է նկատել, որ Դիմողը չի ստացել: Պատասխանելով այն հարցին, թե երբ է ուղարկվել հաղորդագրությունը, Փաստաբանի ներկայացուցիչը նշել է, որ խոսքը վերաբերում է մարտի 26-ին ուղարկված նամակին, սակայն խնդիրն այստեղ ամսաթիվը չէ, այլ այն, որ երբ Փաստաբանը նամակ է ուղարկել Դիմողին, և երբ տեսել է, որ Դիմողն այն չի ստացել տեխնիկական խնդիրներից ելնելով, մեկ այլ եղանակով է նամակ ուղարկել Դիմողին:

Թեև Պայմանագրի 3.2-րդ կետի բովանդակությունից պարզ չէ, թե Դիմողն ինչ եղանակով է պարտավոր տեղեկատվություն տրամադրել Ընկերությանը, այդ թվում՝ Ընկերության կողմում հանդես եկող Փաստաբանին, սակայն 30.10.2024թ. Հանձնաժողովի նիստում ներկայացված Փաստաբանի դիրքորոշումից և Փաստաբանի

ներկայացուցիչ, փաստաբան Լենա Միտիչյանի կողմից ներկայացրած Փաստաբանի դիրքորոշումը հաստատող ապացույցից՝ նամակի բովանդակությունից երևում է, որ Դիմողի և ընկերության միջև փոխադարձ հարաբերություններում հաստատվել է այն գործելակերպը, որ կողմերի միջև տեղեկատվության փոխանակումն իրականացվում է հեռախոսազանգերից և sms (էս էմ էս) նամակագրությունից բացի նաև այլ եղանակներով, այդ թվում՝ էլեկտրոնային փոստով, բջջային հավելվածների միջոցով, գրասենյակ այցելելով և այլն:

Ուստի Դիմողի կողմից Փաստաբանին տեղեկատվություն տրամադրելը բացառապես վերջինիս հեռախոսին զանգահարելու կամ այդ հեռախոսահամարով sms (էս էմ էս) հաղորդագրություն գրելու, տեղեկատվության փոխանակման այլ եղանակներից չօգտվելու պայմաններում հնարավոր չէ հաստատել Փաստաբանի մեղքի առկայությունը իր վստահորդ Դիմողին հետաքրքրող հարցերին չպատասխանելու հարցում: Մասնավորապես ծագում է կասկած, որ Փաստաբանը եթե անգամ հետ չի զանգահարել իր վստահորդին կամ չի պատասխանել Դիմողի զանգերին, ապա դա տեղի է ունեցել տեխնիկական բնույթ կրող կապի խափանումների հետևանքով, Փաստաբանի կամքից անկախ պատճառներով:

Այլ կերպ ասած Պայմանագրի կողմերի փոխադարձ հարաբերություններում հաստատված կապի տարբեր եղանակների միջոցով տեղեկատվություն փոխանակելու գործելակերպի առկայության պայմաններում, Դիմողը կապի այլ միջոցներով ևս կապ չի հաստատել Փաստաբանի հետ իրեն հետաքրքրող նոր հարցերը Փաստաբանին ուղղելու համար, ինչի արդյունքում, առկա է կասկած, որ կապի տեխնիկական խնդիրների հետևանքով Փաստաբանը չի իմացել Դիմողի մոտ նոր հարցեր ծագած լինելու մասին և կարծել է, որ Դիմողի համար պարզ է, որ հաշտության համաձայնությունն այլևս չի կնքվելու, Դիմողը նոր հարց չունի, դրա համար էլ Դիմողն իր հետ կապ չի հաստատել, իսկ յուրաքանչյուր կասկած պետք է մեկնաբանվի Փաստաբանի օգտին:

Սույն գործի նյութերում առկա չէ որև ապացույց առ այն, որ Դիմողը 2024 թվականի ապրիլի 22-ից հետո նույնպես բազմիցս զանգահարել է Փաստաբանին, սակայն վերջինս չի պատասխանել: Հանձնաժողովի 09.10.2024թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Դիմողը հրապարակել է իր հեռախոսի զանգերի պատմության ցանկում 2024 թվականի ապրիլին 18-ին իր և Փաստաբանի միջև տեղի ունեցած 13 րոպե տևողությամբ հեռախոսազանգի արձանագրումը և եթե այն առկա է, ապա պետք է առկա լինեին նաև 2024 թվականի ապրիլին 18-ից հետո Փաստաբանին կատարված, այդ թվում՝ չպատասխանված հեռախոսազանգերի արձանագրումները: Սակայն Դիմողի կողմից ենթադրյալ հեռախոսազանգերի վերաբերյալ որևէ ապացույց չի ներկայացվել:

Հանձնաժողովի 30.11.2024թ. նիստի ժամանակ Դիմողը նշել է, որ անպատասխան թողնված զանգերի մասին քաղվածքում միակ ապացույցը Փաստաբանին զանգահարելու վերաբերյալ 2024 թվականի ապրիլի 22-ի կատարված հեռախոսազանգի սքրինշոթն է, և այդ զանգը պարզապես մի զանգ է, որին Փաստաբանը ուղարկել է **«Ես հետ կզանգահարեմ»** կարճ հաղորդագրությունը դրա համար էլ հնարավոր է եղել ցույց տալ, որ զանգը Դիմողի կողմից կատարվել է: Կարգապահական գործում առկա է գրավոր փաստաթուղթ, որի բովանդակությունից երևում է, որ «Յուքոմ» բջջային օպերատորի անունից հանդես եկող ոմն Արփիին ուղղվել է հարց հետևյալ բովանդակությամբ.

«Ներառված են ելքային զանգերը, որոնց չեն պատասխանել»: Ի պատասխան այդ հարցի՝ Արփին նշել է.

«Ոչ, քաղվածքում ներառված են միայն պատասխանված զանգերը»:

Դիմողը, պատասխանելով Հանձնաժողովի անդամ Միքայել Դանիելյանի հարցին, թե արդյո՞ք պաշտոնապես դիմել է «Յուքոմ» բջջային օպերատորի ղեկավարին անպատասխան ելքային զանգերի վերաբերյալ հարցման կամ որևէ այլ ընթացակարգով պաշտոնական պատասխան ստանալու համար, նշեց որ չի դիմել: Դիմողը նաև նշել է, որ երբևիցե չի զանգահարել Ընկերության գրասենյակ, քանի որ չի դիտարկել դրա անհրաժեշտությունը, կապը միշտ պահել է Փաստաբանի հետ:

Սկսած 2024 թվականի ապրիլի 18-ից ոչ Փաստաբանը և ոչ էլ Ընկերությունը (պայմանագրում նշված հեռախոսահամար՝ +37477287675) իր զանգերին չպատասխանելու մասին Կագապահական վարույթի հարուցման համար առիթ հանդիսացած դիմումում գրված լինելու վերաբերյալ էլ նշել է, որ դիմումը երևի թռուցիկ է կարդացել և չի նկատել, որ դիմումում գրված է, թե իբր ինքը զանգահարել է գրասենյակ: Դիմումի նշված հատվածից հրաժարվել է:

Պատասխանելով Հանձնաժողովի անդամ Կարինե Բաղդասարյանի այն հարցին, թե եղել է այն գրասենյակում, որտեղ աշխատել է Փաստաբանը և գրասենյակի տեղը լավ գիտեր՝ Դիմողը նշել է, որ գիտեր գրասենյակի տեղը, մոտ 2-3 անգամ եղել է գրասենյակում, սակայն անպատասխան թողնված զանգերի հարցը պարզելու համար չի այցելել գրասենյակ:

Ինչ վերաբերում է Փաստաբանի նախաձեռնությամբ զանգերին, ապա ինչպես վերը նշվել է վերջին զանգի ընթացքում 2024 թվականի ապրիլի 18-ին, Փաստաբանը Դիմողին հայտնել է, որ հակառակորդ հաշտության համաձայնության նախագծի վերաբերյալ հակառակորդ կողմի փաստաբանի կողմից արձագանք լինելու դեպքում Փաստաբանը կտեղեկացնի դիմողին դրա մասին: Քանի որ չի եղել որևէ նորություն, ապա նորություն չունենալու պարագայում պարտավոր էլ չի եղել զանգահարելու Դիմողին ձևական բնույթ կրող և ըստ էության ոչինչ չասող ծանուցմամբ, տեղեկացներ, որ հակառակորդ կողմի փաստաբանից որև արձագանք չկա, ինչն առանց այդ էլ պարզ է եղել:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ նիստի ժամանակ Դիմողին ուղղված այն հարցին, թե Փաստաբանին զանգահարելով Դիմողը ցանկացե՞լ է հաշտության վերաբերյալ հարցեր քննարկել վերջինիս հետ, Դիմողը պատասխանել է, որ ոչ այլ հարցեր է ունեցել, մինչդեռ Փաստաբանը Պայմանագրով ստանձնել է միայն հաշտության համաձայնության շուրջ գործողություններ կատարելու պարտավորություն:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննությամբ չի ապացուցվել, որ փաստաբան Հայկուհի Հայկազի Սեդրակյանը հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես չի տեղեկացրել Դիմողին կամ չի պատասխանել նրան հետաքրքրող հարցերին: Հետևաբար Դիմողը՝ որպես Պատասխանողի ենթադրյալ ոչ իրավաչափ վարքագիծն ապացուցելու պարտականություն ունեցող կողմ, պետք է կրի հավելյալ ապացույց չներկայացնելու բացասական հետևանքը, իսկ չփարատված կասկածները պետք է որակվեն ի շահ Պատասխանողի:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Հայկուհի Հայկազի Սեդրակյանի (արտոնագիր՝ թիվ 2213) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2-րդ, 3.2.5-րդ և 3.2.6-րդ ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-24154 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-24154-2-Ա
30 հոկտեմբերի 2024թ.
ք. Երևան